ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР
ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

CJsC NATIONAL CENTER OF ONCOLOGY
named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ. 76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 04/10-425
«10» 06 20 21

Հեռ. (+374 10) 20-94-02

«ԹՎԱՆՉԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Թվանչկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Կատարող) միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լվացքատան ծառայությունների մատուցման թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ *Հետվիրահատական անկողնային պարագաների /ինֆեկցիայով, արյունով և թարախով/ լվացում, բարձերի քիմ մաքրում: Թաց լվացքի քիմ մաքրում, ստերիլիզացիա :. Լվացքից հետո անկողնային պարագաները պետք է պահպանված լինեն լիարժեք տեսքով՝ լաքաների, արյան և բետադինի հետքերը պետք է մաքրված լինեն: Լվացված լվացքը չպետք է գունաթափված լինի: Տհաճ հոտի առկայություն չպետք է լինի: Կատարողը անկողնային պարագաները Պատվիրատուին հանձնում է արդուկած և չոր վիճակում: Եթե անկողնային պարագաները վնասվեն Կատարողի կողմից, ապա Կատարողը պարտավորվում է փոխհատուցել նորով:*

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «ա» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն մասնակի միակողմանի հրաժարվում է 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/17 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՆԱՐԵԿ ԽԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
Հեռ.՝ 010287681